

Կ-850-27.01.2021-ԱԱ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՕՐԵՆՔՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի մարտի 4-ի ՀՕ-97-Ն օրենքը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Սոցիալական աջակցության մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-231-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի «եւ տարածքային կառավարման պետական մարմնի տարածքային ստորաբաժանումներ, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում» բառերը փոխարինել «ենթակա մարմնի ստորաբաժանումներ» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասից հանել «եւ տեղական ինքնակառավարման մարմինը», «եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերով» եւ «կամ համայնքային ծառայության» բառերը, իսկ «են» բառը փոխարինել «է» բառով:

**Հոդված 3.** Օրենքի ամբողջ տեքստից հանել «լիազորած պետական մարմնում չընդգրկված եւ կառավարման ոլորտից դուրս գործող» բառերը:

**Հոդված 4.** Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) ապահովում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը եւ կազմակերպում է դիմումների ընդունումը, հաշվառումը եւ փաստաթղթաշրջանառությունը.»:

**Հոդված 5.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 22.1-րդ հոդվածով.

*«Հոդված 22.1 Միասնական սոցիալական ծառայության լիազորությունները եւ կազմավորման կարգը*

1. Միասնական սոցիալական ծառայությունը՝

1) իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի (անձի) սոցիալական գնահատում (սոցիալական կարիքների գնահատում) եւ կազմակերպում սոցիալական աջակցության տրամադրումը.

2) կազմակերպում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը սոցիալական դեպքի վարման միջոցով.

3) կազմակերպում է հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների, կանանց, տարեցների, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված եւ օրենսդրությամբ սահմանված առանձին կատեգորիայի անձանց սոցիալական պաշտպանության պետական ծրագրերի իրականացումը.

4) կազմակերպում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների (անձանց) համար նախատեսված՝ գնահատված սոցիալական կարիքների վրա հիմնված սոցիալական աջակցության հասցեական ծրագրերի իրականացումը.

5) կազմակերպում է անձին (ընտանիքին) տրամադրվող սոցիալական ծառայությունների հասանելիությունը եւ մատչելիությունը բարելավելու ուղղությամբ պետական ծրագրերի իրականացումը.

6) կազմակերպում է որոշակի բնակության վայր չունեցող, անօթեւան, սոցիալապես անապահով եւ (կամ) հատուկ խմբերին դասված անձանց կացարանով ապահովելու (այդ թվում՝ ժամանակավոր) պետական ծրագրերի իրականացումը.

7) կազմակերպում է սոցիալական համագործակցության համաձայնագրերի ընդունումը տարածքային մակարդակում.

8) գործատուներից, պետական այլ մարմիններից ու կազմակերպություններից, ֆիզիկական անձանցից պահանջում է կենսաթոշակներ, նպաստներ եւ այլ դրամական վճարներ նշանակելու եւ վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթեր, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքում ստուգում է դրանց հավաստիությունը.

9) հարկային մարմնից ստանում է պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը (այսուհետ՝ շտեմարան) ձեւավորելու համար անհրաժեշտ տվյալներ, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում եւ կարգով ստուգում դրանց հավաստիությունը.

10) օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում, վերահաշվարկում է կենսաթոշակներ, նպաստներ եւ այլ դրամական վճարներ, ապահովում կենսաթոշակների, նպաստների եւ այլ դրամական վճարների վճարումը կամ մերժում կենսաթոշակներ, նպաստներ եւ այլ դրամական վճարներ նշանակելու, նշանակված կենսաթոշակներ, նպաստներ եւ այլ դրամական վճարներ վերահաշվարկելու դիմումները.

11) վարում է շտեմարանը, շտեմարանից տվյալներ տրամադրում գործատուներին, ֆիզիկական անձանց եւ պետական մարմիններին ու կազմակերպություններին.

12) սոցիալական աջակցությանն առնչվող հարցերով դիմող անձանց ապահովում է խորհրդատվությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում աջակցում նրանց պահանջվող փաստաթղթեր ստանալու գործում.

13) ապահովում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի իրականացումը.

14) իրականացնում է աշխատանք փնտրող անձի զբաղվածության կարիքների գնահատում, կազմում է զբաղվածության ապահովման անհատական ծրագիր եւ կնքում երկկողմ պայմանագիր զբաղվածության ապահովման անհատական ծրագրի իրականացման մասին.

15) հաշվառում եւ հաշվառումից հանում է աշխատանք փնտրող անձանց, տրամադրում է գործազուրկի կարգավիճակ, կասեցնում, վերականգնում եւ դադարեցնում է այդ կարգավիճակը.

16) իրականացնում է անձի՝ մասնագիտության գիտակցված ընտրությանն ու կարիերայի արդյունավետ պլանավորմանն ուղղված ծառայությունների ապահովում՝ մրցունակ մարդկային կապիտալի ձեւավորման նպատակով.

17) տեղեկատվություն է հավաքագրում նոր ստեղծվող ու թափուր աշխատատեղերի վերաբերյալ, թարմացնում է այդ տեղեկատվությունը եւ ապահովում է հասանելիությունը.

18) իրականացնում է աշխատանքի տեղավորման միջնորդություն աշխատանք փնտրողի եւ գործատուի միջեւ, աշխատանք փնտրողին տրամադրում խորհրդատվություն եւ ուղեգրում գործատուի մոտ.

19) ապահովում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրին հատկացված ֆինանսական միջոցների նպատակային եւ արդյունավետ օգտագործումը.

20) տեղաբաշխում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագիրը՝ ըստ տարածքների եւ աշխատանք փնտրող անձանց առանձին խմբերի (շահառուների), որի հիմքում դրվում են շահառուների ներգրավման առաջնահերթությունները, առանձին տարածաշրջանների աշխատաշուկաների հիմնական բնութագրիչները, ինչպես նաեւ սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի առանձնահատկությունները.

21) կազմակերպում է օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու, մերժելու, կասեցնելու կամ դադարեցնելու գործընթացները.

22) Հայաստանի Հանրապետության օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով տրամադրում է զբաղվածության այլ ծառայություններ.

23) կազմում եւ ամփոփում է սոցիալական աջակցության բնագավառի, ինչպես նաեւ Միասնական սոցիալական ծառայության գործառույթներին առնչվող այլ վիճակագրական ու ֆինանսական հաշվետվությունները, դրանք սահմանված կարգով ներկայացնում է լիազորված պետական մարմին, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ այլ կազմակերպություններ.

24) համագործակցում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց, հասարակական կազմակերպությունների, սոցիալական գործընկերների, գործատուների, աշխատանքի տեղավորման ոչ պետական, միջազգային եւ այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով.

25) Հայաստանի Հանրապետության օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով մատուցում է ծառայություններ բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում.

26) կազմակերպում եւ ապահովում է բժշկասոցիալական փորձաքննության (վերափորձաքննության) գործընթացը.

27) կազմակերպում եւ ապահովում է (ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող անձանց) (հատկացնում) է աջակցող միջոցների տրամադրման գործընթացը.

28) ապահովում է Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով տարածքային մարմիններին վերապահված լիազորությունների իրականացումը.

29) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

2. Միասնական սոցիալական ծառայության կազմավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

**Հոդված 6.** Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 6-րդ հոդվածի 5-րդ մասը, 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 13-րդ, 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերը, 33-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը եւ 43-րդ հոդվածի 2-րդ մասը եւ 46-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 7.** Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասից հանել «կամ համայնքային» բառերը:

### **Հոդված 8. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի ապրիլի 1-ից:
2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են մինչեւ 2021 թվականի ապրիլի 1-ը:
3. Սույն օրենքի ընդունումից հետո Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության համապատասխան գործառույթները եւ Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների համապատասխան գործառույթները Միասնական սոցիալական ծառայությանը վերապահելու դեպքում այդ գործառույթներն իրականացնող քաղաքացիական ծառայողները շարունակում են պաշտոնավարել մինչեւ Միասնական սոցիալական ծառայության անվանացանկի եւ քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերի հաստատումը: Անվանացանկի եւ քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերի հաստատումից հետո Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունում համապատասխան գործառույթներ եւ Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում համապատասխան գործառույթներ իրականացնող քաղաքացիական ծառայողներին Միասնական սոցիալական ծառայությունում կարող է առաջարկվել քաղաքացիական ծառայության հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ: Իրենց գրավոր համաձայնության դեպքում մրցույթի արդյունքով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են առաջարկվող պաշտոններին, իսկ ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ժամկետային աշխատանքային պայմանագրերում կատարվում են համապատասխան փոփոխություններ:
4. Օրենսդրությամբ սահմանված ժամկետում առաջարկությունը մերժելու կամ առաջարկությանը չպատասխանելու դեպքում մրցույթի արդյունքով պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներն օրենքով սահմանված կարգով ազատվում են զբաղեցրած պաշտոններից եւ իրենց դիմումի համաձայն կարող են գրանցվել քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում, իսկ ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ժամկետային աշխատանքային պայմանագրերը օրենսդրությամբ սահմանված կարգով լուծվում են:
5. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ Միասնական սոցիալական ծառայության անվանացանկում կատարված լրացումների եւ փոփոխությունների հետեւանքով առաջացած քաղաքացիական ծառայության նոր պաշտոնները, որոնք չեն զբաղեցվում սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, կարող են զբաղեցվել ժամկետային աշխատանքային պայմանագրով՝ մինչեւ օրենքով սահմանված մրցութային կարգով զբաղեցնելը:»»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կ-850-27.01.2021-ԱԱ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի մարտի 4-ի ՀՕ-97-Ն օրենքը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

««ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Սոցիալական աջակցության մասին» 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-231-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի «եւ տարածքային կառավարման պետական մարմնի տարածքային ստորաբաժանումներ, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմնի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում» բառերը փոխարինել «ենթակա մարմնի ստորաբաժանումներ» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասից հանել «եւ տեղական ինքնակառավարման մարմինը», «եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտերով» եւ «կամ համայնքային ծառայության» բառերը, իսկ «են» բառը փոխարինել «է» բառով:

**Հոդված 3.** Օրենքի ամբողջ տեքստից հանել «լիազորած պետական մարմնում չընդգրկված եւ կառավարման ոլորտից դուրս գործող» բառերը:

**Հոդված 4.** Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4) ապահովում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը եւ կազմակերպում է դիմումների ընդունումը, հաշվառումը եւ փաստաթղթաշրջանառությունը.»:

**Հոդված 5.** Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 22.1-րդ հոդվածով.

*«Հոդված 22.1 Միասնական սոցիալական ծառայության լիազորությունները*

1. Միասնական սոցիալական ծառայությունը՝

1) իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի (անձի) սոցիալական գնահատում (սոցիալական կարիքների գնահատում) եւ կազմակերպում սոցիալական աջակցության տրամադրումը.

2) կազմակերպում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը սոցիալական դեպքի վարման միջոցով.

~~3) իրականացնում է ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի կատարելագործման համապատասխան պետական ծրագրերը:~~

~~4) կազմակերպում է ծնելիությունը և բազմազավակությունը խթանելու պետական ծրագրերի իրականացումը:~~

5) 3) կազմակերպում է հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների, կանանց, տարեցների, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված եւ օրենսդրությամբ սահմանված առանձին կատեգորիայի անձանց սոցիալական պաշտպանության պետական ծրագրերի իրականացումը:

6) 4) կազմակերպում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների (անձանց) համար նախատեսված՝ գնահատված սոցիալական կարիքների վրա հիմնված սոցիալական աջակցության հասցեական ծրագրերի իրականացումը:

7) 5) կազմակերպում է անձին (ընտանիքին) տրամադրվող սոցիալական ծառայությունների հասանելիությունը եւ մատչելիությունը բարելավելու ուղղությամբ պետական ծրագրերի իրականացումը:

8) 6) կազմակերպում է որոշակի բնակության վայր չունեցող, անօթեան, սոցիալապես անապահով եւ (կամ) հատուկ խմբերին դասված անձանց կացարանով ապահովելու (այդ թվում՝ ժամանակավոր) պետական ծրագրերի իրականացումը:

9) 7) կազմակերպում է սոցիալական համագործակցության համաձայնագրերի ընդունումը տարածքային մակարդակում:

~~10) կազմակերպում է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը եւ ապահովում է դիմումների ընդունումը, հաշվառումը եւ փաստաթղթաշրջանառությունը:~~

11) 8) գործառույթից, պետական այլ մարմիններից ու կազմակերպություններից, ֆիզիկական անձանցից պահանջում է կենսաթոշակներ, նպաստներ եւ այլ դրամական վճարներ նշանակելու եւ վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթեր, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքում ստուգում է դրանց հավաստիությունը:

12) 9) հարկային մարմնից ստանում է պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը (այսուհետ՝ շտեմարան) ձեւավորելու համար անհրաժեշտ տվյալներ, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում եւ կարգով ստուգում դրանց հավաստիությունը:

~~13) առաջարկություններ է ներկայացնում հարկային մարմին՝ շտեմարան ներառվող տվյալների հավաստիությունը ճշտելու եւ դրանք փոփոխելու համար:~~

14) 10) օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակում, վերահաշվարկում է կենսաթոշակներ, նպաստներ եւ այլ դրամական վճարներ, ապահովում կենսաթոշակների, նպաստների եւ այլ դրամական վճարների վճարումը կամ մերժում կենսաթոշակներ, նպաստներ եւ այլ դրամական վճարներ նշանակելու, նշանակված կենսաթոշակներ, նպաստներ եւ այլ դրամական վճարներ վերահաշվարկելու դիմումները:

15 11) վարում է շտեմարանը, շտեմարանից տվյալներ տրամադրում գործատուներին, ֆիզիկական անձանց եւ պետական մարմիններին ու կազմակերպություններին.

16) ~~օրենքով սահմանված կարգով քննարկում է կենսաթոշակներ, նպաստներ եւ այլ դրամական վճարներ նշանակելու, վերահաշվարկելու, վճարելու մասին դիմումները.~~

17) ~~կենսաթոշակառուին անվճար տրամադրում է կենսաթոշակի վկայական.~~

18 12) սոցիալական աջակցությանն առնչվող հարցերով դիմող անձանց ապահովում է խորհրդատվությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում աջակցում նրանց պահանջվող փաստաթղթեր ստանալու գործում.

19 13) ապահովում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի իրականացումը.

20) ~~իրականացնում է աշխատաշուկայի ընթացիկ վիճակի ուսումնասիրություններ, վերլուծություններ եւ կանխատեսումներ.~~

24 14) իրականացնում է աշխատանք փնտրող անձի զբաղվածության կարիքների գնահատում, կազմում է զբաղվածության ապահովման անհատական ծրագիր եւ կնքում երկկողմ պայմանագիր զբաղվածության ապահովման անհատական ծրագրի իրականացման մասին.

22 15) հաշվառում եւ հաշվառումից հանում է աշխատանք փնտրող անձանց, տրամադրում է գործազուրկի կարգավիճակ, կասեցնում, վերականգնում եւ դադարեցում է այդ կարգավիճակը.

23 16) իրականացնում է անձի՝ մասնագիտության գիտակցված ընտրությանն ու կարիերայի արդյունավետ պլանավորմանն ուղղված ծառայությունների ապահովում՝ մրցունակ մարդկային կապիտալի ձեւավորման նպատակով.

24 17) տեղեկատվություն է հավաքագրում նոր ստեղծվող ու թափուր աշխատատեղերի վերաբերյալ, թարմացնում է այդ տեղեկատվությունը եւ ապահովում է հասանելիությունը, ~~այդ թվում՝ պաշտոնական կայքէջի միջոցով.~~

25-18) իրականացնում է աշխատանքի տեղավորման միջնորդություն աշխատանք փնտրողի եւ գործատուի միջեւ, աշխատանք փնտրողին տրամադրում խորհրդատվություն եւ ուղեգրում գործատուի մոտ.

26 ) ~~աշխատուժի առաջարկի ու պահանջարկի գնահատման արդյունքների հիման վրա առաջարկություններ է ներկայացնում նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում անվճար ուսուցանվող մասնագիտությունների ցանկի ու տեղերի վերաբերյալ.~~

27) ~~մասնակցում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի մշակման աշխատանքներին, կայքէջի միջոցով տեղեկատվություն է հրապարակում ծրագրի կատարման ընթացքի (ծախսված ֆինանսական միջոցների եւ արդյունքների) մասին, իրականացնում է զբաղվածության պետական ծրագրերի մոնիթորինգ.~~

28 19) ապահովում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրին հատկացված ֆինանսական միջոցների նպատակային եւ արդյունավետ օգտագործումը.

29 20) տեղաբաշխում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագիրը՝ ըստ տարածքների եւ աշխատանք փնտրող անձանց առանձին խմբերի (շահառուների), որի հիմքում դրվում են շահառուների ներգրավման առաջնահերթությունները, առանձին տարածաշրջանների աշխատաշուկաների հիմնական բնութագրիչները, ինչպես նաեւ սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի առանձնահատկությունները.

30) գործատուներին տեղեկատվություն եւ մասնագիտական խորհրդատվություն է տրամադրում զբաղվածության պետական ծրագրերի, ինչպես նաեւ աշխատաշուկայի վիճակի վերաբերյալ.

31) հաշվառում եւ հաշվառումից հանում է լիազորված պետական մարմնի հետ համագործակցող աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությանը.

32) ապահովում է «Զբաղվածության մասին» օրենքով նախատեսված հանրապետական եւ տարածքային համաձայնեցման կոմիտեների ձեւավորումն ու արդյունավետ գործունեությունը.

33-21) կազմակերպում է օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու, մերժելու, կասեցնելու կամ դադարեցնելու գործընթացները.

34) աջակցում է աշխատանքային միգրացիային վերաբերող Հայաստանի Հանրապետության կողմից կնքված միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ արտագնա աշխատանքների համար աշխատանքային միգրանտների հավաքագրման, վերապատրաստման եւ օտարերկրյա պետությունում աշխատելու գործընթացների կազմակերպմանը.

35 22) Հայաստանի Հանրապետության օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով տրամադրում է զբաղվածության այլ ծառայություններ.

36) օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով մասնակցում է սոցիալական աջակցության, զբաղվածության, հաշմանդամություն ունեցող եւ այլ սոցիալական խմբերի անձանց տրամադրվող սոցիալական աջակցության բնագավառների ծրագրերի բյուջետային գործընթացին եւ միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագծի մշակման աշխատանքներին.

37) օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք է տալիս սոցիալական աջակցության բնագավառներում քաղաքացիների առաջարկություններին, դիմումներին եւ բողոքներին, միջոցներ է ձեռնարկում դրանցում հաղորդվող՝ Միասնական սոցիալական ծառայության գործունեության մեջ տեղ գտած խախտումների եւ թերությունների վերացման ուղղությամբ.

38) սոցիալական աջակցության բնագավառների զարգացման եւ ռազմավարական ծրագրերի մշակման համար լիազորված պետական մարմին ներկայացնում է անհրաժեշտ տվյալներ եւ առաջարկություններ.

39) առաջարկություններ է ներկայացնում լիազորված պետական մարմին՝ Միասնական սոցիալական ծառայության գործառույթներին (լիազորություններին) վերաբերող օրենսդրության կատարելագործման վերաբերյալ.



40 23) կազմում եւ ամփոփում է սոցիալական աջակցության բնագավառի, ինչպէս նաեւ Միասնական սոցիալական ծառայության գործառույթներին առնչվող այլ վիճակագրական ու ֆինանսական հաշվետվությունները, դրանք սահմանված կարգով ներկայացնում է լիազորված պետական մարմին, իսկ օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ այլ կազմակերպություններ:

44 24) համագործակցում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց, հասարակական կազմակերպությունների, սոցիալական գործընկերների, գործատուների, աշխատանքի տեղավորման ոչ պետական, միջազգային եւ այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

42 25) Հայաստանի Հանրապետության օրենքով եւ այլ իրավական ակտերով սահմանված կարգով մատուցում է ծառայություններ բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում:

43 26) կազմակերպում եւ ապահովում է բժշկասոցիալական փորձաքննության (վերափորձաքննության) գործընթացը:

44 27) կազմակերպում եւ ապահովում է (ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող անձանց) (հատկացնում) է աջակցող միջոցների տրամադրման գործընթացը:

~~45) վարում է Միասնական սոցիալական ծառայության կայքէջը:~~

46 28) ապահովում է Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով տարածքային մարմիններին վերապահված լիազորությունների իրականացումը:

47-29) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:»:

2. Միասնական սոցիալական ծառայության կազմավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

**Հոդված 6.** Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 6-րդ հոդվածի 5-րդ մասը, 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ եւ 13-րդ, 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերը, 33-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը եւ 43-րդ հոդվածի 2-րդ մասը եւ 46-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 7.** Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասից հանել «կամ համայնքային» բառերը:

**Հոդված 8. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի ապրիլի 1-ից:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը ընդունվում են մինչեւ 2021 թվականի ապրիլի 1-ը:

3. Սույն օրենքի ընդունումից հետո Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության համապատասխան գործառույթները եւ Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում՝ սոցիալական աջակցության տարածքային

գործակալությունների համապատասխան գործառույթները Միասնական սոցիալական ծառայությանը վերապահելու դեպքում այդ գործառույթներն իրականացնող քաղաքացիական ծառայողները շարունակում են պաշտոնավարել մինչև Միասնական սոցիալական ծառայության անվանացանկի եւ քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերի հաստատումը: Անվանացանկի եւ քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերի հաստատումից հետո Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունում համապատասխան գործառույթները եւ Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում համապատասխան գործառույթներ իրականացնող քաղաքացիական ծառայողներին Միասնական սոցիալական ծառայությունում կարող է առաջարկվել քաղաքացիական ծառայության հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ: Իրենց գրավոր համաձայնության դեպքում մրցույթի արդյունքով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողները վերանշանակվում են առաջարկվող պաշտոններին, իսկ ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ժամկետային աշխատանքային պայմանագրերում կատարվում են համապատասխան փոփոխություններ:

4. Օրենսդրությամբ սահմանված ժամկետում առաջարկությունը մերժելու կամ առաջարկությանը չպատասխանելու դեպքում մրցույթի արդյունքով պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներն օրենքով սահմանված կարգով ազատվում են զբաղեցրած պաշտոններից եւ իրենց դիմումի համաձայն կարող են գրանցվել քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում, իսկ ժամկետային աշխատանքային պայմանագրով պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ժամկետային աշխատանքային պայմանագրերը օրենսդրությամբ սահմանված կարգով լուծվում են:

5. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ Միասնական սոցիալական ծառայության անվանացանկում կատարված լրացումների եւ փոփոխությունների հետեւանքով առաջացած քաղաքացիական ծառայության նոր պաշտոնները, որոնք չեն զբաղեցվում սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, կարող են զբաղեցվել ժամկետային աշխատանքային պայմանագրով՝ մինչև օրենքով սահմանված մրցութային կարգով զբաղեցնելը:»»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

<<Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> 4-850-27.01.2021-ԱՍ-011/0  
 <<Պետական կառավարման համակարգի մարմինների մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> 4-850<sup>1</sup>-27.01.2021-ԱՍ-011/0  
 <<Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին>> 4-850<sup>2</sup>-27.01.2021-ԱՍ-011/0  
 օրենքների նախագծերի երկրորդ ընթերցմամբ քննարկման համար ներկայացված բանավոր առաջարկների

Առաջարկի հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական գեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
Նարեկ Զեյնալյան	<<Պետական կառավարման համակարգի մարմինների մասին>> օրենքում փոփոխություն կատարելու մասին>> 4-850 <sup>1</sup> -27.01.2021-ԱՍ-011/0	Առաջարկում եմ հանել նախագծի 2-րդ հոդվածը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
Նարեկ Զեյնալյան	<<Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> 4-850-27.01.2021-ԱՍ-011/0	<p>Առաջարկում եմ նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 22.1 հոդվածի վերնագիրը խմբագրել հետևյալ կերպ.</p> <p>&lt;&lt; Միասնական սոցիալական ծառայության լիազորությունները և կազմավորման կարգը&gt;&gt;:</p> <p>Առաջարկում եմ նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 22.1 հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.</p> <p>&lt;&lt;2. Միասնական սոցիալական ծառայության կազմավորման կարգը սահմանվում է կառավարության որոշմամբ:&gt;&gt;</p> <p>ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ: ՀՀ Սահմանադրության 159-րդ հոդվածի՝ պետական կառավարման համակարգի մարմինների կազմավորման կարգը սահմանվում է օրենքով: Փաթեթից հասկանալի չէ միասնական սոցիալական ծառայության</p>	Ընդունվել է:	Ընդունվել է:

		կազմավորման կարգը:		
Նարեկ Զեյնալյան	<<Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> 4-850-27.01.2021-ԱԱ-011/0	Առաջարկում են վերանայել նախագծի 5-րդ հոդվածով նախատեսված միասնական սոցիալական ծառայությունների լիազորությունները:  Նշված 47 լիազորությունների մի մասը նախարարության կանոնադրությամբ սահմանված են որպես նախարարության գործառույթներ:  Ելնելով պետության և իրավունքի տեսական դասագրքային դասակարգումից, <<լիազորություն>> հասկացությունը ծնուն է իրավունք, իսկ <<գործառույթ>> հասկացությունը՝ պարտականություն է և ենթակա է կատարման:	Ընդունվել է:	Ընդունվել է:
Նարեկ Զեյնալյան	<<Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> 4-850-27.01.2021-ԱԱ-011/0	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով փոփոխվող 8-րդ հոդվածի 3-րդ մասը «նախարարության» բառից հետո լրացնել «համապատասխան գործառույթները» բառերով, «նախարարությունում» բառից հետո «համապատասխան գործառույթներ» բառերով, «առաջարկվել» բառից հետո «քաղաքացիական ծառայության» բառերով:	Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:	Ընդունվել է:
ԼՀԿ խմբակցության որոշում առաջարկություն	<<Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> 4-850-27.01.2021-ԱԱ-011/0	Առաջարկվում է՝ Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքում լրացվող 22.1-ին հոդվածի 1-ին մասը լրացնել նոր կետով՝ <i>«սոցիալական աշխատանքի մասնագետի միջոցով ապահովում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի, այլ սոցիալական խմբի) հետ օրենքով նախատեսված միջոցառումների շարունակական անցկացումը, մասնավորապես՝ իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակի կանխարգելման, դրա պատճառների և հետևանքների վերացմանն ուղղված աշխատանք»:</i> <b>Հիմնավորում:</b> Նախագծի 5-րդ հոդվածով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ «Օրենք») լրացվող 22.1-ին հոդվածի 1-ին	Ընդունվել է : Առաջարկության դրույթները կսահմանվեն կազմավորման կարգում:	Ընդունվել է:

		<p>մասի համաձայն՝  <i>Միասնական սոցիալական ծառայությունը՝</i>  1) իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի (անձի) սոցիալական գնահատում (սոցիալական կարիքների գնահատում) և կազմակերպում սոցիալական աջակցության տրամադրումը.  (...)  5) կազմակերպում է հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների, կանանց, տարեցների, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և օրենսդրությամբ սահմանված առանձին կատեգորիայի անձանց սոցիալական պաշտպանության պետական ծրագրերի իրականացումը.  6) կազմակերպում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների (անձանց) համար նախատեսված գնահատված սոցիալական կարիքների վրա հիմնված սոցիալական աջակցության հասցեական ծրագրերի իրականացումը.  (...):  Փաստացի, Նախագիծը, սահմանելով Միասնական սոցիալական ծառայության լիազորությունները կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության ոլորտում, Միասնական սոցիալական ծառայության աշխատակիցների համար չի սահմանում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի (ընտանիքի, սոցիալական այլ խմբի) հետ մշտական և անմիջական կապի պահպանման ուղղակիորեն ամրագրված պարտավորություն:</p>		
<p>ԼՀԿ խմբակցության որոշում առաջարկություն</p>	<p>&lt;&lt;Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին&gt;&gt; Կ-850-27.01.2021-ԱԱ-011/0</p>	<p><i>Սույն օրենքի ընդունումից հետո Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների համապատասխան գործառույթները Միասնական սոցիալական ծառայությանը վերապահելու դեպքում այդ գործառույթներն իրականացնող քաղաքացիական ծառայողները շարունակում են պաշտոնավարել մինչև Միասնական սոցիալական ծառայության անվանացանկի և</i></p>	<p><b>Չի ընդունվել:</b></p>	<p><b>Ընդունվել է:</b></p>

քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերի հաստատումը: Անվանացանկի և քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերի հաստատումից հետո Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում և Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում համապատասխան գործառույթներ իրականացնող քաղաքացիական ծառայողներին Միասնական սոցիալական ծառայությունում կարող է առաջարկվել հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ (...):

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Քաղաքացիական ծառայողի իրավական վիճակը համապատասխան մարմնի վերակազմակերպման և կառուցվածքային փոփոխության ժամանակ» վերտառությամբ 23-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ՝

Համապատասխան մարմնի վերակազմակերպման և (կամ) կառուցվածքային փոփոխության ժամանակ քաղաքացիական ծառայողը վերանշանակվում է մինչև վերակազմակերպումը և (կամ) կառուցվածքային փոփոխությունը զբաղեցրած պաշտոնին հավասարազոր պաշտոնի կամ ավելի ցածր պաշտոնի՝ իր համաձայնությամբ, բացառությամբ առաջխաղացման դեպքի:

«Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի տրամաբանությամբ համապատասխան մարմնի վերակազմակերպման կամ կառուցվածքային փոփոխության դեպքում քաղաքացիական ծառայողն առաջնահերթ վերանշանակվում է հավասարազոր պաշտոնի, իսկ անհնարինության դեպքում՝ իր համաձայնությամբ կարող է նշանակվել ցածր պաշտոնի:

Նախագծի վկայակոչված նորմի տառացի մեկնաբանման դեպքում իրավասու մարմինը կարող է սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում համապատասխան գործառույթներ իրականացնող քաղաքացիական ծառայողներին իր

		<p>նախապատվությամբ առաջարկել նախկինում զբաղեցրած պաշտոնին հավասարազոր կամ ցածր պաշտոն: Նման իրավակարգավորման պարագայում համապատասխան մարմնի վերակազմակերպման դեպքում իրավասու մարմինը քաղաքացիական ծառայողին կարող է անմիջապես առաջարկել իր՝ նախկինում զբաղեցրած պաշտոնից ցածր պաշտոն, որից հրաժարվելու դեպքում սոցիալական մասնագետը ենթակա է լինելու քաղաքացիական ծառայությունից ազատման՝ «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով («Սույն օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերում քաղաքացիական ծառայության պաշտոնի չնշանակվելը»):</p> <p>Վերակազմակերպվող պետական մարմնի քաղաքացիական ծառայողների աշխատանքային իրավունքները երաշխավորելու նպատակով <i>առաջարկվում է Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ նախադասությունում «հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ» բառերը փոխարինել «հավասարազոր, եթե հավասարազոր պաշտոն առկա չէ՝ բարձր, իսկ անհնարինության դեպքում՝ ցածր պաշտոն» բառերով:</i></p>		
<p>ԼՀԿ խմբակցության որոշում առաջարկություն</p>	<p>&lt;&lt;Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին&gt;&gt; Կ-850-27.01.2021-ԱԱ-011/0</p>	<p>Առաջարկվում է Նախագծի 8-րդ հոդվածը լրացնել նոր մասով՝ «Սույն հոդվածով սահմանված կարգով Միասնական սոցիալական ծառայության հաստիքները համալրելուց հետո սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական մարմինը Միասնական սոցիալական ծառայությունում քաղաքացիական ծառայության նշանակված, ինչպես նաև ժամկետային աշխատանքային պայմանագրով աշխատողների համար մինչև եռամսյա ժամկետում կազմակերպում է որակավորման բարձրացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ:»:</p> <p><b>Հիմնավորում:</b> Սոցիալական պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի</p>	<p><b>Ընդունվել է :</b> Առաջարկության դրույթները կսահմանվեն կազմավորման կարգում:</p>	<p><b>Ընդունվել է:</b></p>

		<p>գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ծառայության՝ որակյալ և մասնագիտացված կադրերով համալրված լինելու հանգամանքով, ինչից ելնելով առաջարկվում է Միասնական սոցիալական ծառայության պաշտոններում վերանշանակվելուց կամ քաղաքացիական ծառայության անցնելուց (ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելուց) հետո սոցիալական մասնագետների համար սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական մարմնի կողմից վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու պահանջ սահմանել:</p>		
<p>ԼՀԿ խմբակցության որոշում առաջարկություն</p>	<p>&lt;&lt;Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին&gt;&gt; Կ-850-27.01.2021-ԱԱ-011/0</p>	<p>Առաջարկվում է</p> <p>*Օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ՝</p> <p><i>«Ինտեգրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններում համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետների քանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ հաշվի առնելով համայնքում բնակչության թիվը:»:</i></p> <p>*Օրենքի 42-րդ հոդվածը լրացնել նոր 2.1-ին մասով՝</p> <p><i>«Եթե համայնքի սոցիալական աշխատանքի մասնագետի զնահատմամբ սույն օրենքով իրեն վերապահված լիազորությունները բավարար չեն անձի (ընտանիքի, սոցիալական այլ խմբի) կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու, հաղթարելու կամ անձի (ընտանիքի, սոցիալական այլ խմբի) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու պատճառները և հետևանքները վերացնելու համար, ապա սոցիալական դեպքի վարումը փոխանցվում է Միասնական սոցիալական ծառայությանը:»:</i></p> <p>*Օրենքի 43-րդ հոդվածը լրացնել նոր 3-րդ մասով՝</p> <p><i>«3. Սույն օրենքով նախատեսված դեպքերում</i></p>	<p>Ընդունվել է : Առաջարկության դրույթները կսահմանվեն կազմավորման կարգում:</p>	<p>Ընդունվել է:</p>



*սոցիալական աշխատանքի մասնագետի՝ տնային այցելություններ կատարելու հետ կապված ծախսերը կատարվում են պետական միջոցների հաշվին:»:*

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ:** Նախագծով միասնական սոցիալական ծառայության ներդրումը ենթադրում է նախկին աշխատանքային ձևաչափի էական փոխակերպում: Օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգավորումների հետ համեմատության տեսանկյունից առաջարկվող փոփոխությունների համաձայն՝ էապես ավելացվել և հստակեցվել են միասնական սոցիալական ծառայության գործառնությունը և դրանց բովանդակությունը, հատկապես՝ սոցիալական աշխատանքի կազմակերպման տեսանկյունից: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Նախագծով առաջարկվող փոփոխությունները չեն նախատեսում սոցիալական աշխատողի կարգավիճակի ամրագրում աշխատանքային նոր ձևաչափի ներդրմանը զուգահեռ: Ավելին, սոցիալական աշխատողի կարգավիճակի ամրագրման բացակայությունը հատվածային և ոչ լիարժեք է դարձնելու միասնական սոցիալական ծառայության գործառնությունը:

Նկատի ունենալով մի կողմից սոցիալական աշխատանքի շրջանակներում իրականացվող միջոցառումների բովանդակությունը և բազմազանությունը (տվյալների հավաքագրում և վերլուծություն, պլանավորում, շահապաշտպանություն, սոցիալական մենթորություն, ուղեկցում, ճգնաժամային միջամտություն, մշտադիտարկում և գնահատում, կոնֆլիկտների կառավարում և այլն), մյուս կողմից՝ առաջարկվող փոփոխություններով սոցիալական աշխատողի կարգավիճակի ամրագրման բացակայությունը՝ անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ, որոնք հետապնդում են անձի (ընտանիքի, սոցիալական այլ խմբի) կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելը կանխարգելելու նպատակ, որի արդյունքում չեն անտեսվի կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու դրդապատճառները, և որպես հետևանք՝ էապես կբարձրանա տրամադրվող սոցիալական աջակցության արդյունավետությունը:

		<p>Նախատեսվող փոփոխություններով հստակ չէ, թե միասնական տեղեկատվական համակարգում ու՞մ ենք ուզում տեսնել՝ դեպք վարողի, թե՞ համայնքային սոցիալական աշխատողի: Վերջիններիս գործառույթներն էապես տարբերվում են: Միասնական տեղեկատվական համակարգի ներդրմանը զուգահեռ անհրաժեշտ է Օրենքում նախատեսել կարգավորումներ, որոնք կսահմանեն սոցիալական աշխատանքի երկաստիճան համակարգ, սոցիալական աշխատողի երաշխիքները, իրավունքներն ու պարտականությունները:</p> <p>Սոցիալական աշխատանքի երկաստիճան համակարգն այս համատեքստում ենթադրում է միասնական տեղեկատվական համակարգում դեպք վարողների ներգրավում, իսկ համայնքներում՝ սոցիալական աշխատողների թվի ավելացում՝ համաձայն բնակչության թվի: Դա հնարավորություն կտա սոցիալական աշխատողներին պահպանել իրենց ճկունությունը՝ պարտադիր իրականացվող միջոցառումների արդյունավետ կազմակերպման տեսանկյունից, ինչպես նաև շարունակական կապի մեջ գտնվել դժվարին իրավիճակում հայտնված անձանց (ընտանիքների, սոցիալական այլ խմբերի) հետ: Հակառակ պարագայում՝ առանց նշյալ կարգավորումների, սոցիալական աջակցության տրամադրումը կրելու է հատվածային բնույթ՝ անտեսելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելուն նպաստող գործոնների վերհանման, կանխարգելման ու հակազդման գործընթացները:</p>		
--	--	---	--	--